Հաստատված է ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ
«_31_ »__08__ 2020 թ.-ի նիստում (արձ. թիվ 1):
Ամբիոնի պետ, ոստ. փոխգնդապետ
Ա. Հովհաննիսյան ……
(ստորագրություն)

……
(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		ՀՀ իրավապահ մարմինները
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Ոստիկանական միջին մասնագիտական կրթության
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Ոստիկանական գործ
ԱՄԲԻՈՆ		Քրեական դատավարության ամբիոն E-mail: qrdatambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ա. Հովհաննիսյան (ի. գ. թ., դոցենտ) E-mail: qrdatambion@mail.ru Հեռ.՝ +374 93000762
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		1-ին կուրս, 2-րդ կիսամյակ

ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«ՀՀ իրավապահ մարմինները» մոդուլի ընդհանուր ծավալը կազմում է 30 ժամ, որից 8-ը՝ դասախոսություն, 8-ը՝ սեմինար, 14-ը՝ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Մոդուլը գնահատվում է ստուգարքի անցկացմամբ:
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ		Մոդուլը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն» դասընթացի իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«ՀՀ իրավապահ մարմինները» մոդուլի շրջանակներում ուսումնասիրվում են իրավապահ գործունեության էությունը, նշանակությունը, իրավապահ գործունեության հիմնական ձևերը, ՀՀ դատական համակարգի և իրավապահ կոնկրետ մարմինների գործունեության առանձնահատկությունները:
ՆՊԱՏԱԿ/ԽՆԴԻՐՆԵՐ		Մոդուլի նպատակն է ուսումնասիրել իրավապահ գործունեության ձևերը, իրավապահ մարմինների կարգավիճակը և գործառույթները: Մոդուլի խնդիրներն են՝ 1. սահմանել իրավապահ գործունեության հիմնական հասկացությունները և ուղղությունները, 2. ներկայացնել ՀՀ դատարանների գործունեությունը և լիազորությունները, 3. ներկայացնել պետական մարմինների համակարգում ՀՀ դատախազության տեղը և դերը, դատախազության մարմինների

		համակարգը և կառուցվածքը, դատախազության լիազորություն-ները (գործառույթները), 4. սահմանել փաստաբանության հասկացությունը, խնդիրները, ներկայացնել փաստաբանական գործունեության հիմնական ուղղությունները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***1. Իմանա՝***		1) իրավապահ գործունեության սուբյեկտների իրավական կարգավիճակի տարրերը, 2) ՀՀ դատական համակարգը կազմող դատարանների լիազորությունները, դատավորի անկախության երաշխիքները, 3) իրավապահ կոնկրետ մարմինների կառուցվածքը և նրանց լիազորությունները:
2. *Կարողանա՝*		1) վերլուծել իրավապահ գործունեության սուբյեկտների իրավական կարգավիճակի տարրերը, 2) թվարկել և բացատրել ՀՀ դատական համակարգը կազմող դատարանների լիազորությունները, դատավորի անկախության երաշխիքները, 3) մեկնաբանել հանրային իշխանության համակարգում իրավապահ կոնկրետ մարմինների տեղը և դերը, վերարտադրել այդ մարմինների համակարգը և կառուցվածքը, թվարկել և բացատրել նրանց լիազորությունները:
3. Տիրապետի՝		1) իրավապահ գործունեության սուբյեկտների իրավական կարգավիճակի որոշման կանոններին, 2) ՀՀ դատական համակարգը կազմող դատարանների լիազորությունները, դատավորի անկախության երաշխիքները սահմանող նորմերի մեկնաբանման կանոններին, 3) իրավապահ կոնկրետ մարմինների կառուցվածքը և լիազորությունները սահմանող նորմերի մեկնաբանման կանոններին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. *Դիլբանդյան Ս., Հարությունյան Ա., Ղազինյան Գ., Ղուկասյան Հ.* Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները / Հեղինակային խմբի ղեկավար և խմբագիր Գ.Ս. Ղազինյան: Երևան, 6-րդ հրատ., Տիգրան Մեծ., 2014: 2. Правоохранительные органы: учебник для вузов / под ред. О. А. Галустьяна. – М.: Юнити-Дана, 2008.

		3. Правоохранительные органы: учебник / под ред. В. П. Божьева. – М.: Высшее образование, 2007. 4. *Гуценко, К. Ф.* Правоохранительные органы: учебник для вузов / К. Ф. Гуценко, М. А. Ковалев. – М.: Зерцало, 2007.
Լրացուցիչ		1. *Байдуков, В. А.* Правоохранительные органы Российской Федерации: учебник для вузов / В. А. Байдуков, В. М. Бозров, Е. Р. Ергашев [и др.]. – М.: Норма, 2008. 2. Савюк, Л. К. Правоохранительные органы: учебник / Л. К. Савюк. – М.: Юристъ, 2006. 3. Гриненко А.В., Жариков Ю.С. Правоохранительные органы Российской Федерации: Краткий учебный курс. – М.: Норма, 2005. 4. Дмитриев Ю.А., Шапкин М.А. Правоохранительные органы РФ. – М.: Эксмо, 2005. 5. Качалов В. Правоохранительные органы: Курс лекций. — М. 2005. 6. Правоохранительные органы: Конспект лекций. — М.: Приор-2004. 7. Рыжаков А.Л. Правоохранительные органы: Учебник; М.: ИНФРА-М,2004. 8. Савюк Л. К. Правоохранительные органы: Учебник. — М.: Юристъ, 2004. 9. Смирнова Н.Н. Правоохранительные органы Российской Федерации Учебное пособие. – М.: Изд-во Михайлова В.А., 2004. 10. Фокин В.М. Правоохранительные органы: Учебник для вузов., 2005. 11. Черников В.В. Судоустройство и правоохранительные органы РФ. – М.: Проспект, 2005. 12. Научно-практический комментарий к Уголовно-процессуальному кодексу РФ / Под общ. ред. В.М. Лебедева. М., 2002. 13. Беленков Р.А. Правоохранительные органы: Конспект лек М.: Приориздат, 2003. 14. Габричидзе Б. И., Елисеев Б. П., Чернявский А. Г. Правоохранительные органы Российской Федерации. – М.: Дело и Сервис (ДИС), 2002. 15. Григонис Э.П. Правоохранительные органы: Учебник для СПбу: Питер Бук, 2002. 16. Гуценко К. Ф., Ковалев М. А. Правоохранительные органы Ф. Гуценко. — М.: Зерцало, 2000. 17. Кобзарев Ф. М., Кобзарева В. Ф. Правоохранительные органы. М.:МПСИ, 2002. 18. Лиманский В.А. Правоохранительные органы. Сборник схем : Учебное пособие для вузов. – СПб: Паритет, 2003.

19. Орлов Ю.К., Кручинина Н.В. Суд и правоохранительные органы. – М.: Юристъ, 2003.
20. Правоохранительные органы Российской Федерации: Учебник/ под ред. В. П. Божьева. – М.: Спарк, 2002.
21. Смоленский М. Б., Фисенко Л. А. Правоохранительные органы РФ. Ростов н/Д.: Феникс, 2002.
22. Черников В.В. Судебные, правоохранительные и контрольные органы России: Учебник. – М.: Велби, 2002.
23. Четвериков В. С. Правоохранительные органы: Учебное пособие. М.:Инфра-М, 2001.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ	Գնահատականը տառանշումով Ստուգված Չստուգված Չներկայացած
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:

Ներկայություն		Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն աշխատանքներ		Ինքնուրույն աշխատանքներն անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը՝ ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ՕՐ/ԼՍԱՐ. ՊԱՐԱՊ.	ԹԵՄԱ/ԺԱՄ	ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ	ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
1-ին լսար. պարապ.	**Իրավապահ գործունեության և իրավապահ մարմինների հասկացությունը** Դասախոսություն (2 ժամ)	**Տեսակը՝** դասախոսություն • դասախոսություն (ավանդական) **Նպատակը՝** ներկայացնել իրավապահ գործունեության և իրավապահ մարմինների հասկացությունը, ձևերը **Քննարկվող հարցերը՝** իրավապահ գործունեության հատկանիշները և ձևերը: Իրավապահ մարմինների հատկանիշները	• հիշել իրավապահ գործունեության հատկանիշները • մատնանշել իրավապահ գործունեության հատկանիշների փոխկապակցվածությունը • թվարկել իրավապահ գործունեության ձևերը • հիշել իրավապահ մարմինների հատկանիշները	**Ընթացիկ գնահատում.** Ակտիվություն, հետադարձ կապ՝ բանավոր հիմնավորումներ, հարցադրումներ
2-րդ լսար. պարապ.	**Իրավապահ գործունեության և իրավապահ մարմինների հասկացությունը** սեմինար պարապմունք (2 ժամ)	**Տեսակը՝** սեմինար պարապմունք • սովորողների հարցում • խմբային քննարկումներ **Նպատակը՝** ամրապնդել տեսական գիտելիքները իրավապահ գործունեության և իրավապահ մարմինների հատկանիշների մասին **Քննարկվող հարցերը՝** իրավապահ գործունեության հատկանիշները և ձևերը: Իրավապահ մարմինների հատկանիշները:	• ներկայացնել իրավապահ գործունեության հատկանիշները • բնութագրել իրավապահ գործունեության հասկացությունը • ներկայացնել իրավապահ գործունեության ձևերը • թվարկել իրավապահ մարմինները	**Ընթացիկ գնահատում.** Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից գիտելիքների հավաստում և գնահատում
3-րդ լսար. պարապ.	**ՀՀ դատական համակարգը** Դասախոսություն (2 ժամ)	**Տեսակը՝** դասախոսություն • դասախոսություն (ավանդական) **Նպատակը՝** ներկայացնել ՀՀ դատական համակարգի հասկացությունը և ատյանները **Քննարկվող հարցերը՝** «դատական համակարգ», «դատարան», «դատական ատյան» հասկացությունները: Առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից գործերի քննության կարգը:	• ներկայացնել ՀՀ դատական համակարգի հատկանիշները և հասկացությունը • ներկայացնել ՀՀ դատական համակարգի աստիճանակարգությունը • ներկայացնել դատարանների կողմից որոշումների կայացման կարգը և դրանց տեսակները • ներկայացնել դատարաններին ընդդատյա գործերը, նրանց կողմից կայացված որոշումների՝ ուժի մեջ	**Ընթացիկ գնահատում.** Ակտիվություն, հետադարձ կապ՝ բանավոր հիմնավորումներ, հարցադրումներ

		Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը, սահմանափակ և լրիվ վերաքննություն	մտնելու և բողոքարկման կարգը • ներկայացնել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության էությունը, • ներկայացնել սահմանափակ և լրիվ վերաքննությունը	
4-րդ լսար. պարապ.	**ՀՀ դատական համակարգը** սեմինար պարապմունք (2 ժամ)	**Տեսակը՝** սեմինար պարապմունք • սովորողների հարցում • թեստային վարժությունների լուծում • խմբային քննարկումներ **Նպատակը՝** ամրապնդել ՀՀ դատական համակարգի վերաբերյալ տեսական գիտելիքները, պարզաբանել անհասկանալի հարցերը **Քննարկվող հարցերը՝** «դատական համակարգ», «դատարան», «դատական ատյան» հասկացությունները, առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարան-ների կողմից գործերի քննության կարգը: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը, սահմանափակ և լրիվ վերաքննություն	• ներկայացնել ՀՀ դատական համակարգի հատկանիշները և հասկացությունը • ներկայացնել ՀՀ դատական համակարգի աստիճանակարգությունը • ներկայացնել դատարանների կողմից որոշումների կայացման կարգը և դրանց տեսակները • ներկայացնել դատարաններին ընդդատյա գործերը, նրանց կողմից կայացված որոշումների՝ ուժի մեջ մտնելու և բողոքարկման կարգը • ներկայացնել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության էությունը, • ներկայացնել սահմանափակ և լրիվ վերաքննությունը	**Ընթացիկ գնահատում.** Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար գիտելիքների հավաստում և գնահատում
5-րդ լսար. պարապ.	**ՀՀ դատախազությունը** Դասախոսություն (2 ժամ)	**Տեսակը՝** դասախոսություն • դասախոսություն (ավանդական) **Նպատակը՝** ներկայացնել ՀՀ դատախազության կառուցվածքը, կազմավորման ընթացակարգը, սահմանադրական լիազորությունները **Քննարկվող հարցերը՝** ՀՀ դատախազության կառուցվածքային տարրերը, ՀՀ գլխավոր դատախազի ընտրության և նշանակման	• ՀՀ դատախազության կառուցված-քային տարրերը • բնութագրել դատախազության գոր-ծունեության իրավական հիմքը կազմող ակտերը • ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազի ընտրության և նշանակման կարգը • ներկայացնել ու բացատրել ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների բովանդակությունը	**Ընթացիկ գնահատում.** Ակտիվություն, հետադարձ կապ՝ բանավոր հիմնավորումներ, հարցադրումներ

		կարգը, ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների բովանդակությունը		
6-րդ լսար. պարապ.	**ՀՀ դատախազությունը** սեմինար պարապմունք - ընթացիկ ստուգում (2 ժամ)	**Տեսակը՝** սեմինար պարապմունք - ընթացիկ ստուգում • սովորողների հարցում • թեստային վարժությունների լուծում • խմբային քննարկումներ **Նպատակը՝** 1. ամրապնդել ՀՀ դատախազության կարգավիճակի և գործունեության վերաբերյալ տեսական գիտելիքները, պարզաբանել անհասկանալի հարցերը: 2. Ստուգել նախորդ թեմաներից սովորողների գիտելիքներն ու կարողությունները **Քննարկվող հարցերը՝** ՀՀ դատախազության կառուցվածքային տարրերը, ՀՀ գլխավոր դատախազի ընտրության և նշանակման կարգը, ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների բովանդակությունը:	• ուշադրություն դարձնել ՀՀ դատախազության կառուցվածքային տարրերին, ՀՀ գլխավոր դատախազի ընտրության և նշանակման կարգին • ներկայացնել ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների բովանդակությունը Ընթացիկ ստուգման առաջադրանքները սովորողներին տրվում է ընթացիկ ստուգման օրը:	**Ընթացիկ գնահատում.** Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար գիտելիքների հավաստում և գնահատում: Ընթացիկ ստուգման գնահատումը կատարվում է 10 բալային համակարգով
7-րդ լսար. պարապ.	**Փաստաբանությունը ՀՀ-ում** Դասախոսություն (2 ժամ)	**Տեսակը՝** դասախոսություն • դասախոսություն (ավանդական) **Նպատակը՝** ներկայացնել փաստաբանական գործունեության էությունը **Քննարկվող հարցերը՝** Փաստաբանության և փաստաբանական գործունեության հասկացությունը, նշանակությունը և խնդիրները. Փաստաբանական գործունեության ուղղությունները և արտոնագրումը.	• ուշադրություն դարձնել փաստաբանության հասկացությանը, խնդիրներին, կառուցվածքին և գործառույթներին • ներկայացնել փաստաբանական գործունեության ուղղությունները	**Ընթացիկ գնահատում.** Ակտիվություն, հետադարձ կապ՝ բանավոր հիմնավորումներ, հարցադրումներ

		Հանրային պաշտպանությունը և հանրային պաշտպանի գրասենյակը.		
8-րդ լսար. պարապ.	**Փաստաբանությունը ՀՀ-ում** սեմինար պարապմունք (2 ժամ)	**Տեսակը՝** սեմինար պարապմունք • սովորողների հարցում • թեստային վարժությունների լուծում • խմբային քննարկումներ • կոնկրետ իրավիճակների վերլուծություն **Նպատակը՝** ամրապնդել փաստաբանական գործունեության վերաբերյալ տեսական գիտելիքները, պարզաբանել անհասկանալի հարցերը **Քննարկվող հարցերը՝** փաստաբանության հասկացությունը, խնդիրները, փաստաբանական գործունեության ուղղությունները	• ուշադրություն դարձնել փաստաբանության հասկացությանը, խնդիրներին • ներկայացնել փաստաբանական գործունեության ուղղությունները	**Ընթացիկ գնահատում.** Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար գիտելիքների հավաստում և գնահատում

ՀԱՐՑԱՇԱՐ

«ՀՀ իրավապահ մարմինները» մոդուլի ստուգարքի

1. Իրավապահ գործունեության հասկացությունը և հատկանիշները.
2. Իրավապահ մարմինների հասկացությունը և տեսակները: Իրավապահ գործունեության ձևերը.
3. ՀՀ դատական համակարգի ընդհանուր բնութագիրը.
4. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները.
5. Առաջին ատյանի վարչական դատարանները.
6. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը.
7. Վերաքննիչ դատարանները, որպես երկրորդ ատյանի դատարաններ:
8. Սահմանափակ և լրիվ վերաքննություն.
9. ՀՀ վճռաբեկ դատարանը.
10. ՀՀ դատախազության տեղը պետական մարմինների համակարգում: Դատախազության մարմինների համակարգը և կառուցվածքը.
11. Քրեական հետապնդման հարուցումը, որպես դատախազության գործունեության ուղղություն (գործառույթ).
12. Դատախազական հսկողությունը հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ.
13. Դատախազական հսկողությունը պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ.
14. Մեղադրանքի պաշտպանությունը դատարանում, որպես դատախազության սահմանադրական լիազորություն.
15. Պետական շահերի պաշտպանության հայցի հարուցումը դատարան, որպես դատախազության սահմանադրական լիազորություն.
16. Դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկումը, որպես դատախազության սահմանադրական լիազորություն.
17. Փաստաբանության և փաստաբանական գործունեության հասկացությունը, նշանակությունը և խնդիրները.
18. Փաստաբանական գործունեության ուղղությունները և արտոնագրումը.
19. Հանրային պաշտպանությունը և հանրային պաշտպանի գրասենյակը.